



Կապիտալ
ասեթ
մեներջմենթ

ԿԱՄ ՊԱՏ ԼԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Երևան-2019

Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին

| Հազար ՀՀ դրամ | | 30 սեպտեմբեր 2019 | 31 դեկտեմբեր 2018 |
|---|----------|-------------------|-------------------|
| Ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | 3,913 | 454 |
| «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ | 7 | 1,165,275 | 1,201,921 |
| Հետգնման համաձայնագրերի գծով ստացվելիք գումարներ | | - | 224,072 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,169,188 | 1,426,447 |
| Պարտավորություններ | | | |
| Հետգնման համաձայնագրերի գծով վճարվելիք գումարներ | 8 | 407,408 | - |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 4 | 76 |
| Այլ պարտավորություններ | | 912 | 1,197 |
| Ընդամենը պարտավորություններ (բացառությամբ փայտերերին վերագրելի գուտ ակտիվների) | | 408,324 | 1,273 |
| Փայտերերին վերագրելի գուտ ակտիվներ | 9 | 760,864 | 1,425,174 |

Ալիկ Առաքելյան
Ֆոնդի կառավարչի գլխավոր գործադիր տնօրեն

Արզամ Աբրահամյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

25 հոկտեմբեր 2019

Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքի մասին

| Հազար ՀՀ դրամ | | 01.07.19- 30.09.19 | 01.01.19- 30.09.19 | 01.07.18- 30.09.18 | 01.01.18- 30.09.18 |
|---|---|-----------------------|-----------------------|-----------------------|-----------------------|
| Տոկոսային եկամուտ | 5 | 8 | 4,924 | 5,442 | 13,060 |
| Զուտ օգուտ (վնաս) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներից | 6 | 50,336 | 105,759 | 27,780 | 92,868 |
| Ընդամենը եկամուտ (ծախս) | | 50,344 | 110,683 | 33,222 | 105,928 |
| Ներդրումային կառավարման վճարներ | | (1,888) | (8,149) | (3,458) | (9,505) |
| Պահառուի վճարներ | | (291) | (1,279) | (534) | (1,485) |
| Տոկոսային ծախսեր | 8 | (6,430) | (7,991) | (9) | (212) |
| Միջնորդավճարներ | | (71) | (78) | (92) | (174) |
| Շահութահարկի գծով ծախս | | (20) | (85) | (36) | (99) |
| Ընդամենը գործառնական ծախսեր | | (8,700) | (17,582) | (4,129) | (11,475) |
| Ժամանակաշրջանի շահույթ (վնաս) | | 41,644 | 93,101 | 29,093 | 94,453 |

Ալիկ Առաքելյան
Ֆոնդի կառավարչի գլխավոր գործադիր տնօրեն

Արգամ Աբրահամյան
«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր
ներկայացուցիչ

25 հոկտեմբեր 2019

Հաշվետվություն փայտերերին վերագրելի զուտ ակտիվների փոփոխության մասին

Մեյստեմբերի 30-ին ավարտված եռամսյակի համար

| Հազար ՀՀ դրամ | | 2019 | 2018 |
|---|---|----------|-----------|
| Մնացորդն առ 01 հուլիս | 9 | 775,490 | 1,416,703 |
| Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների աճ(նվազում) | | 41,644 | 29,093 |
| Փայտերերի կողմից կատարված ներդրումներ և մարումներ | | | |
| Փայերի թողարկումներ ժամանակաշրջանի ընթացքում | | 8,410 | 37,148 |
| Փայերի հետգնում ժամանակաշրջանի ընթացքում | | (64,680) | (47,453) |
| Ընդամենը փայտերերի կողմից կատարված զուտ ներդրումներ | | (56,270) | (10,305) |
| Մնացորդն առ 30 սեպտեմբեր | 9 | 760,864 | 1,435,491 |

Ալիկ Առաքելյան
Ֆոնդի կառավարչի գլխավոր գործադիր տնօրեն

Արգամ Աբրահամյան
«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

25 հոկտեմբեր 2019

ԿԱՍ ՊԱՖ ներդրումային ֆոնդի ֆինանսական հաշվետվություններ

Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

Մեյսիսների 30-ին ավարտված եռամսյակի համար

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | | 01.01.19-30.09.19 | 01.01.18-30.09.18 |
|---|--|--------------------------|--------------------------|
| Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | | | |
| Ստացված տոկոսներ | | 72,497 | 74,379 |
| Վճարված տոկոսներ | | (7,142) | 295 |
| Ներդրումների վաճառքից (մարումից) մուտքեր | | 268,007 | 246,127 |
| Ներդրումների գնում | | (193,102) | (412,089) |
| Վճարված գործառնական ծախսեր | | (9,791) | (10,769) |
| Վճարված շահութահարկ | | (157) | (118) |
| Փոփոխություններ գործառնական ակտիվներում և պարտավորություններում | | | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացված գուտ գումարներ | | 223,999 | (206,816) |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարված գուտ գումարներ | | 406,559 | (32,564) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | | 760,870 | (341,555) |
| Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից | | | |
| Փայերի թողարկումից մուտքեր | | 16,154 | 423,564 |
| Փայերի հետգնումից ելքեր | | (773,565) | (64,870) |
| Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից | | (757,411) | 358,694 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ (նվազում) | | 3,459 | 17,139 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | | 454 | 741 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ առ 30 սեպտեմբեր | | 3,913 | 17,880 |

Ալիկ Առաքելյան
Ֆոնդի կառավարչի գլխավոր գործադիր տնօրեն

Արգամ Արբահամյան
«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր
ներկայացուցիչ

25 հոկտեմբեր 2019

| | |
|---|----------|
| Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին | 2 |
| Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքի մասին | 3 |
| Հաշվետվություն փայտերերին վերագրելի զուտ ակտիվների փոփոխության մասին | 4 |
| Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին | 5 |
| 1. Հաշվետու ֆունդ | 7 |
| 2. Պատրաստման հիմունքներ | 7 |
| 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն | 8 |
| 4. Ֆինանսական ռիսկերի կառավարում | 12 |
| 5. Տոկոսային եկամուտ | 17 |
| 6. Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | 17 |
| 7. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 17 |
| 8. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 17 |
| 9. Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ | 18 |

1. Հաշվետու ֆոնդ

«ԿԱՄ ՊԱՖ» ներդրումային ֆոնդի կանոնները (այսուհետ՝ Ֆոնդ) գրանցվել է 2013թ. ապրիլի 30-ին ՀՀ ԿԲ խորհրդի 123-Ա որոշմամբ:

Ֆոնդի կառավարումն իրականացվում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի կողմից, որը ստեղծվել է 2012թ. հոկտեմբերի 18-ին, և գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ և ստացել թիվ 1 լինցենզիան:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2019թ. հոկտեմբերի 25-ին:

2. Պատրաստման հիմունքներ

ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) համապատասխան:

բ) Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման իրական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չվերաչափվող ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով:

գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը ֆոնդի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

դ) Հարկում

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ֆոնդը չի հանդիսանում հարկվող շահույթի վրա հիմնված շահութահարկ վճարող: Ֆոնդը վճարում է գուտ ակտիվներից հաշվարկված շահութահարկ տարեկան պարբերականությամբ՝ գուտ ակտիվների 0.01 տոկոսի չափով: Այդպիսի շահութահարկը չի հանդիսանում դասական իմաստով շահութահարկ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 12 ստանդարտով, և հաշվառվում է որպես այլ հարկ:

ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար կառավարիչը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ (որոնք ունեն էական ռիսկ) տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 3-ում և 4-ում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող օգուտի կամ վնասի տարբ:

բ) Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը, բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Ֆոնդն արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքների բոլոր պայմանագրային պայմանները, բայց ոչ ապագա պարտքային կորուստները: Ստացված կամ ստացվելիք տոկոսները, վճարված կամ վճարվելիք տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

գ) Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

դ) Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, որպես ծառայությունների կատարում:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ.

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇՎ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ.

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նաշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են, և
- սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Այլ ֆինանսական պարտավորություններ.

Այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միննույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

8. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

4. Ֆինանսական ռիսկերի կառավարում

ա) Ներածություն և նկարագրություն

Ֆոնդը ենթարկված է հետևյալ ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ
- Գործառնական ռիսկ

Այս ծանոթագրությունը ներկայացնում է տեղեկություն վերոնշյալ ռիսկերին Ֆոնդի ենթարկվածության վերաբերյալ, Ֆոնդի նպատակները, քաղաքականությունը, ռիսկի չափման և կառավարման գործընթացները:

Ռիսկի կառավարման կառուցվածք

Ֆոնդը պահպանում է ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների տարբեր դիրքեր համաձայն իր ներդրումային կառավարման ռազմավարության: Ֆոնդի ներդրումային պորտֆելն ամբողջությամբ բաղկացած է պարտքային պետական արժեթղթերից: Ֆոնդի ներդրումային պորտֆելի սահմանափակումները կարգավորված են նաև ՀՀ ԿԲ խորհրդի 06 դեկտեմբեր 2011թ. թիվ 337-Ն որոշմամբ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի կողմը չի կատարի պարտականությունը՝ Ֆոնդի համար հանգեցնելով ֆինանսական կորստի: Այն ավելանում է հիմնականում պահվող պարտքային արժեթղթերից, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական ակտիվներից, դրամական միջոցներ և դրանց համարժեքներից և հակադարձ ռեպո համաձայնագրերի ներքո դեբիտորական պարտքերից: Ռիսկի կառավարման գծով հաշվետվությունների պատրաստման նպատակների համար Ֆոնդը հաշվի է առնում և համախմբում պարտքային ռիսկին ենթարկվածության բոլոր բաղադրիչները (ինչպիսիք են անհատ փոխառուի անվճարունակության ռիսկը, երկրի և ոլորտի ռիսկը):

Պարտքային ռիսկի կառավարում

Պարտքային ռիսկը վերահսկվում է ներդրումային կառավարչի կողմից բավարար պարբերականությամբ բոլոր հնարավոր ռիսկերը կառավարելու համար: Ֆոնդը գործընկերներին ընտրելիս իրականացնում է մոնիթորինգ, ինչպես նաև ապահովում է ակտիվների դիվերսիֆիկացում ըստ տարբեր գործընկերների:

Պարտքային ռիսկին ենթարկվածությունը ներկայացված է ստորև աղյուսակում

| Հազար ՀՀ դրամ, 30 սեպտեմբեր 2019 | Դրամական միջոցներ | Պարտքային արժեթղթեր | Ընդամենը |
|--|-------------------|---------------------|------------------|
| Ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ ՀՀ բանկերում | 3,913 | - | 3,913 |
| ՀՀ պետական արժեթղթեր | - | 1,165,275 | 1,165,275 |
| Հետգնման համաձայնագրերի գծով ստացվելիք գումարներ | - | - | - |
| | 3,913 | 1,165,275 | 1,169,188 |

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ֆոնդն ածանցյալ ֆինանսական գործիքներ չի ունեցել:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ֆոնդի դրամական միջոցները և դրանց համարժեքները գտնվում են միայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում, որը վարկանշված է Fitch Ratings վարկանշող գործակալության BB վարկանիշով՝ կանխատեսումը կայուն: Ներդրումային կառավարիչը մոնիթորինգի է ենթարկում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակը եռամսյակային կտրվածքով և ըստ անհրաժեշտության:

Դեբիտորական պարտքեր հակադարձ հետզման համաձայնագրերի գծով

Եթե Ֆոնդը դառնում է հակադարձ հետզման համաձայնագրերի կողմ, ապա դա կարող է պարտքային կորստի հանգեցնել այն իրադարձությունից, երբ գործարքի մյուս կողմն անկարող լինի կատարել իր պայմանագրային պարտականությունները Ֆոնդի նկատմամբ և գրավի արժեքը նվազում է արագորեն և բավարար չէ ծածկելու վճարվող գումարը: Ֆոնդը փորձում է կառավարել իր պարտքային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ֆոնդը կարող է կատարել ֆինանսավորման ապահով գործարքներ, մասնավորապես՝ վաճառքի և հետզման պայմանագրեր (ոչպա պայմանագրեր), կամ գնման և վերավաճառքի պայմանագրեր (հակադարձ հետզման պայմանագրեր)՝ Ֆոնդի ակտիվների մինչև 10% չափով: Կառավարիչը պատասխանատու է պարտքային ռիսկի վերահսկողության համար և պատասխանատու է Ֆոնդի պարտքային ռիսկի կառավարման համար, այդ թվում՝ պարտքային քաղաքականության ձևակերպում, գրավի պահանջների բավարարում, վարկերի գնահատում, պարտքային ռիսկի ուսումնասիրություն և գնահատում, պայմանագրային կողմերի գծով, ինչպես նաև ըստ թողարկողի, վարկային ռեյտինգի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի գծով կուտակումների սահմանափակում: Դեկավարությունը կանոնավորապես գնահատում է ակտիվների որակը՝ ռիսկը նվազագույնի հասցնելու համար:

Ժամկետանց և արժեզրկված ակտիվներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ մի ֆինանսական ակտիվ ժամկետանց կամ արժեզրկված չի եղել:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ֆոնդը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիությունը կառավարելու տեսանկյունից Ֆոնդի քաղաքականությունը և ներդրումային կառավարչի մոտեցումն է՝ ապահովել, որքան հնարավոր է, որ այն մշտապես ունենա բավարար իրացվելի միջոցներ՝ իր պարտավորությունները ժամանակին մարելու համար՝ ինչպես սովորական, այնպես էլ լարված պայմաններում, ներառյալ փայերի գնահատված մարումները, այնպես, որ Ֆոնդն անհարկի վնասներ չկրի և նրա հեղինակությունը ռիսկի չենթարկվի:

Իր կանոնների համաձայն՝ Ֆոնդը պարտավոր է մարել փայերը՝ համապատասխան հայտ ստանալուց հետո եռօրյա ժամկետում: Ուստի Ֆոնդն իրացվելիությունը կառավարելիս հաշվի է առնում փայերի մարման արդեն իսկ ստացված և սպասվող հայտերը, եթե այդպիսիք լինեն:

Ֆոնդը չի պահում կանխիկ միջոցներ՝ բոլոր այդ պահանջները բավարարելու համար, քանի որ փորձը ցույց է տալիս, որ մարման տեմպերը կարող են կանխատեսվել ողջամիտ մակարդակով, և ղեկավարությունը կարծում է, որ Ֆոնդի ակտիվները բարձր իրացվելի են և կարող են վաճառվել ըստ պահանջի՝ ապահովելու համար ֆինանսական պարտավորությունների գծով կանխիկի արտահոսքերը:

Ֆոնդն իր իրացվելիության ռիսկը կառավարելու համար ներդրում է կատարում այնպիսի արժեթղթերում, որոնք հնարավոր կլինի իրացնել 30 օրից պակաս ժամկետում:

դ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը այն ռիսկն է, որ շուկայական գների, ինչպիսիք են տոկոսադրույքները, փայերի գները, արտարժույթի փոխարժեքները, փոփոխությունները, ազդեցություն կունենա Ֆոնդի եկամտի կամ պահվող ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել ու վերահսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունն այնպես, որ այն մնա ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով եկամտաբերությունը:

Շուկայական ռիսկի կառավարում

Ֆոնդի շուկայական ռիսկի կառավարման ռազմավարությունը պայմանավորված է Ֆոնդի ներդրումային նպատակով: Ֆոնդի շուկայական ռիսկը կառավարվում է Ֆոնդի կառավարչի կողմից օրական հիմունքով՝ սահմանված քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան:

Տոկոսադրույքի ռիսկ

Ֆոնդի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին պայմանավորված է ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանումներով՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար կառավարիչը ներդրումներն իրականացնում է այնպիսի ժամկետային կառուցվածքով, որը առավելագույնս համապատասխանի ֆոնդի փայերի դասերի կառուցվածքին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել, եթե շուկայում համատարած տեղի ունենա տոկոսադրույքի մակարդակների տատանումներ:

Արժույթային ռիսկ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ֆոնդի արժույթային ռիսկին ենթարկվածությունը պայմանավորված է դոլարային կորպորատիվ պարտատոմսերով, որի կառավարումը իրականացվում է Ֆոնդի կանոններին համաձայն: Իսկ կոնկրետ ակտիվների գծով, հաշվի առնելով արտարժույթային ակտիվների չափը, առանձին գազման մեխանիզմներ չեն կիրառվել:

Արժույթային ռիսկին ենթարկվածությունը ներկայացված է ստորև աղյուսակում

| <i>Հազար ՀՀ դրամ, 30 սեպտեմբեր 2019</i> | Դրամական միջոցներ | Պարտքային արժեթղթեր | Ընդամենը |
|---|--------------------------|----------------------------|-----------------|
| Ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ ՀՀ բանկերում | - | - | - |
| ՀՀ պետական արժեթղթեր | - | - | - |
| ՀՀ ոչ պետական արժեթղթեր | - | - | - |
| | - | - | - |

ե) Գործառնական ռիսկ

Ֆոնդի կառավարչի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությունը հասցվող վնասը:

Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ֆոնդի կառավարիչը, որի կառավարման համար նա առաջնորդվում է ընդհանուր ստանդարտներով, ինչը ներառում է վերահսկողություն բիզնես գործընթացների նկատմամբ:

զ) Կապիտալի ռիսկի կառավարում

Ֆոնդի կապիտալը ներկայացված է փայտերերին վերագրելի գուտ ակտիվներով: Ֆոնդը փորձում է ներդրումների բաժանորդագրումները ներդնել այնպես, որ ապահովի Ֆոնդի ներդրումային նպատակների իրականացումը՝ մինչև ժամանակ պահպանելով բավարար իրացվելիությունը փայտերերի մարումներն ապահովելու համար: Ղեկավարությունը կարող է՝ ա) մարել և թողարկել նոր փայեր՝ Ֆոնդի հիմնադիր փաստաթղթերի համաձայն, բ) Ֆոնդի կողմից փայատերերին բաշխման ենթակա գումարները որոշելիս առաջնորդվել սեփական հայեցողությամբ:

է) Ոչ ֆինանսական ռիսկերի կառավարում

Տեխնոլոգիական և գործառնական ռիսկեր

Կառավարիչը և, համապատասխանաբար՝ Ֆոնդը, ենթակա են տեխնոլոգիական և գործառնական ռիսկերի, որն իրենից ներկայացնում է Կառավարչի, նրա մատակարարների կամ նրան ծառայություն մատուցող կողմերի վերահսկողության ընթացակարգերում կամ տեխնոլոգիական համակարգերում առկա թերությունների արդյունքում հնարավոր կորուստները, որոնք սահմանափակում են տեղեկատվության հավաքագրման, մշակման և հաղորդակցման հնարավորությունը, իր սեփական, ինչպես նաև փայատերերի գործարքները արդյունավետ և անխափան իրականացնելու հնարավորությունը: Այս ռիսկը նաև ներառում է մարդկային սխալի, աշխատակիցների ոչ պատշաճ վարքագծի, համակարգչային վիրուսների, տեղեկատվական հարձակումների, ահաբեկչության, ինչպես նաև բնական աղետների ռիսկը:

Կառավարչի գործառնությունները մեծապես պայմանավորված են իր տեխնոլոգիական համակարգերի ամբողջական և անխափան գործունեությունից և հաջողության գրավականը մասնավորապես նաև կայանում է տեխնոլոգիաների ժամանակին բարելավումներով՝ հաշվի առնելով հաճախորդի հետզհետե փոփոխվող կարիքները: Ֆոնդի համակարգերի խափանումների, սխալների կամ անսարքության դեպքում, գործառնությունները կարող են զգալի բացասական ազդեցություն կրել: Գործունեության նման խափանումներից խուսափելու համար, Ֆոնդը վարում է կրկնօրինակման և տվյալների վերականգնման գործառնություններ, այդ թվում՝ տվյալների կրկնօրինակման և հաղորդակցության ապահովման միջոցներ, ինչպես նաև իրականացնում է աղետների դեպքում տվյալների վերականգնման ստուգումներ:

Գործառնական ռիսկը մեղմացնող վերահսկողությունների մշակման և ներդրման համար առաջնահերթ պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր ստորաբաժանման ավագ ղեկավար անձնակազմը: Կառավարիչն ունի տվյալների հետ աշխատանքի ստանդարտները կարգավորող քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք անդրադառնում են թե ներքին տեղեկատվությանը, աշխատակիցների անձնական տվյալներին, և թե ոչ հանրային սեփականություն հանդիսացող հաճախորդի տվյալներին: Տվյալների անվտանգության գծով անցկացվում են կանոնավոր վերապատրաստումներ:

Անկախ ռիսկերի կառավարման աշխատանքներից, ոչ միշտ է հնարավոր կանխել կամ կանխարգելել տեխնոլոգիական կամ գործառնական գործընթացների խափանումները, ինչպես նաև կեղծիքի կամ այլ խեղաթյուրումների հավանականությունը, հետևաբար՝ Կառավարչի կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները ոչ բոլոր դեպքերում կարող են արդյունավետ լինել: Կառավարիչը և Ֆոնդը կարող են ենթարկվել դատական հայցերի, կրել վնասներ և կանոնակարգային պատժամիջոցների ենթարկվել, և կարող են ստիպված լինել բավականաչափ միջոցներ ներդնել խոցելի կետերը և այլ ռիսկերի արդյունքները մեղմելու և վերականգնելու ուղղությամբ:

Կանոնակարգային ռիսկեր

Որպես արժեթղթերի, ակտիվների կառավարման շուկայի մասնակից, Կառավարիչը ենթակա է կառավարական, վերահսկիչ և ինքնակառավարվող տարբեր մարմինների կողմից կանոնակարգման: Այս կանոնակարգող մարմինները սովորաբար ըստ իրենց հայեցողության իրավասու են ավելի մեծ սահմանափակումներ սահմանել կանոնակարգվող միավորի գործունեության համար՝ նպատակ ունենալով պաշտպանել ներդրողների կամ հանրության շահերը: Հանդես գալով որպես ներդրումային խորհրդատու՝ Կառավարիչը նաև ենթակա է կանոնակարգային պահանջների, որոնք մասնավորապես առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պատասխանատվություններին, կատարողական վճարներին, համապատասխանության ծրագրերի իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, խորհրդատուի և խորհրդատվական հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայտման ինչպես նաև կեղծիքից պաշտանվածության ընդհանուր դրույթներին:

Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է ներդնեն փողերի լվացման կանխարգելման քաղաքականություններ, իրականացնեն աշխատակիցների հատուկ վերապատրաստման դասընթացներ, նշանակեն փողերի լվացման կանխարգելման համար պատասխանատու աշխատակցի: Ավելին, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում կանոնակարգային գործառնությունները ողջ աշխարհում շարունակաբար զարգանում են, և պայմանավորված են հիմնականում տեխնոլոգիաների զարգացմամբ, և որպես արդյունք՝ տեղեկատվության արագ տարածման հնարավորություններով: Ֆոնդի/Կառավարչի հանդեպ կիրառելիության շրջանակներում պետք է ապահովվի համապատասխանություն այդ կանոնակարգային պահանջների հետ:

Ղեկավարությունը զգալի ներդրում է կատարել իր գործունեությանն առնչվող տարաբնույթ իրավաբանական և կանոնակարգային պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ: Չնայած օրենսդրական և կանոնակարգային պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ կատարված քայլերին, առկա են մի շարք ռիսկեր, մասնավորապես այն մասով, որ կանոնակարգային դաշտը կարող է լինել ոչ հստակ կամ կանոնակարգող մարմնի կողմից կարող են վերանայվել դրանց կիրառման ցուցումները: Կանոնակարգող մարմնի կողմից Կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված անձանց, աշխատակիցների, պաշտոնատար անձանց հանդեպ ցանկացած հարկադրանք կարող է հանգեցնել տույժերի, տուգանքների, դադարեցման կամ չեղյալ հայտարարման հրամանների, հարկադիր գործողությունների, կասեցման կամ լիազորությունների դադարեցման, կամ այլ կարգապահական միջոցների գործադրմանը, ընդհուպ մինչև գործունեության սահմանափակումը: Նշվածներից ցանկացածի պարագայում Կառավարչի և Ֆոնդի վարկանիշը կարող է վնաս կրել և դա կարող է բացասաբար ազդել գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա: Պահանջների հետ համապատասխանության բացակայության արդյունքում կարող են կիրառվել զգալի դրամական և ոչ դրամական պատժամիջոցներ:

5. Տոկոսային եկամուտ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | 01.07.19- 30.09.19 | 01.01.19- 30.09.19 | 01.07.18- 30.09.18 | 01.01.18- 30.09.18 |
|--|-------------------------------|-------------------------------|-------------------------------|-------------------------------|
| Տոկոսային եկամուտներ հակադարձ հետգնման պայմանագրերից | - | 4,909 | 5,442 | 13,008 |
| Այլ | 8 | 15 | - | 52 |
| | 8 | 4,924 | 5,442 | 13,060 |

6. Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | 01.07.19- 30.09.19 | 01.01.19- 30.09.19 | 01.07.18- 30.09.18 | 01.01.18- 30.09.18 |
|---|-------------------------------|-------------------------------|-------------------------------|-------------------------------|
| Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից | - | - | - | - |
| Պարտքային պետական արժեթղթերից | 50,336 | 105,759 | 27,780 | 92,868 |
| Պարտքային ոչ պետական արժեթղթերից | - | - | - | - |
| | 50,336 | 105,759 | 27,780 | 92,868 |

7. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | 30 սեպտեմբեր 2019 | 31 դեկտեմբեր 2018 |
|---|--------------------------|--------------------------|
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ ֆինանսական ակտիվներ. | | |
| Պարտքային պետական արժեթղթեր | 1,165,275 | 1,201,921 |
| Պարտքային ոչ պետական արժեթղթեր | - | - |
| | 1,165,275 | 1,201,921 |

8. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

Այս հոդվածում ներկայացված գումարն իրենից ներկայացնում է հակադարձ հետգնման ռեպո պայմանագրով ՀՀ ֆինանսական հաստատություններից ստացված գումարները և դրանց գծով հաշվարկված տոկոսները: Միջին տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ 6.5 տոկոս է, իսկ մարման ժամկետը մինչև մեկ ամիս:

9. Փայտերերին վերագրելի գուտ ակտիվներ

Փայերի թվաքանակում առկա շարժերի վերլուծությունները և փայերի տերերին վերագրվող գուտ ակտիվները եռամսյակի ընթացքում ներկայացված են ստորև.

| <i>Փայերի քանակ</i> | 2019 | | | |
|--|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| | Դաս A | Դաս B | Դաս C | Ընդամենը |
| Մնացորդն առ 01 հուլիս | 119,713 | 111,047 | 70,657 | 301,417 |
| Եռամսյակի ընթացքում փայերի թողարկում | - | 623 | 3,166 | 3,789 |
| Եռամսյակի ընթացքում փայերի ետգնում | (19,250) | (31) | (5,577) | (24,858) |
| Մնացորդն առ 30 սեպտեմբեր | 100,463 | 111,639 | 68,246 | 280,348 |
| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>Դաս A</i> | <i>Դաս B</i> | <i>Դաս C</i> | <i>Ընդամենը</i> |
| Մնացորդն առ 01 հուլիս | 318,394 | 284,671 | 172,425 | 775,490 |
| Փայատերերին վերագրելի գուտ ակտիվների աճ (նվազում) | 16,081 | 16,223 | 9,338 | 41,642 |
| Եռամսյակի ընթացքում փայերի թողարկում | - | 1,630 | 7,780 | 9,410 |
| Եռամսյակի ընթացքում փայերի ետգնում | (51,667) | (82) | (13,929) | (65,678) |
| Մնացորդն առ 30 սեպտեմբեր | 282,808 | 302,442 | 175,614 | 760,864 |
| Չուտ ակտիվների արժեքը յուրաքանչյուր փայի գծով (ՀՀ դրամ) | 2,815.05 | 2,709.12 | 2,573.26 | - |

Ֆոնդի փայերը առաջարկվում են մեկ փայի դիմաց դրա գուտ ակտիվների արժեքով յուրաքանչյուր գործառնական օր՝ համաձայն հաջորդ օրվա 03:00 դրությամբ հասանելի տեղեկատվության («գուտ ակտիվների արժեքի որոշման ժամ»): Գործառնական օր՝ նշանակում է ՀՀ արժեթղթերի շուկայի աշխատանքային օր: Գործառնական ցանկացած օր Ֆոնդի կողմից սահմանված՝ գուտ ակտիվների արժեքի որոշման ժամից առաջ ստացված՝ փայերի ձեռքբերման հայտերը կբավարարվեն օրվա փակման դրությամբ հաշվարկված գուտ ակտիվների արժեքով: Փայերը կմարվեն գուտ ակտիվների այն արժեքով, որը կգործի տվյալ գործառնական օրվա գուտ ակտիվների արժեքի որոշման ժամի դրությամբ: Ֆոնդի կողմից ստացված ներդրումային եկամուտը կուտակվում և վերստին ներդրվում է Ֆոնդում և հաշվի է առնվում փայի արժեքը որոշելիս:

Փայատերերին վերագրելի գուտ ակտիվներն իրենցից ներկայացնում են պարտավորություններ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և հաշվառվում են մարման արժեքով, որը վճարման ենթակա կլինեք ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ, եթե փայատերերը որոշեին օգտվել փայերի մարման իրավունքից: Փայատերերն իրավունք ունեն ցանկացած աշխատանքային օր պահանջելու այն փայերի մարման իրավունք և Ֆոնդը պարտավոր է բավարարել նման հայտը երեք օրվա ընթացքում:

Ֆոնդի կառավարման արդյունքների, եկամտաբերության և այլ մանրամասն տեղեկությունների վերաբերյալ կարող եք ծանոթանալ Ֆոնդը կառավարող ընկերության՝ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության, ինտերնետային կայք էջում <http://capitalfunds.am/>:

Ալիկ Առաքելյան
Ֆոնդի կառավարչի գլխավոր գործադիր տնօրեն

Արգամ Աբրահամյան
«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ

25 հոկտեմբեր 2019